Հաստատում եմ՝
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների
նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Ա.Կարապետյան
(Պաշտոն, անուն, ազգանուն)

(Ստորագրություն)

Արձանագրություն N 5

« ՀՀ ՏՋՆՆ-ԳՀԾՁԲ-18/14/1» ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի
(Մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (Հայաստանի տնտեսության գերակա ոլորտների և առանցքային խնդիրների վերաբերյալ տեղեկատվական արշավի կազմակերպում և դրա շրջանակումտնտեսական թեմաներով տեղեկատվական-վերլուծական հեռուստահաղորդաշար պատրաստում և թողարկում))

ք. Երևան

31 հուլիսի 2018թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի

նախագահ՝ Մ.Կարապետյան

քարտուղար՝ Մ.Գրիգորյան

անդամներ՝ Մ.Եսայան, Ա.Խեչոյան, Ա.Չիլինգարյան, Ա.Քոչարյան

1. Մասնակիցների կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերի վերաբերյալ

1.1 Գնահատող հանձնաժողովը անբավարար գնահատեց առաջին տեղ զբաղեցրած «**Փրայմ Թայմ**» և «**Մուլտի-մեդիա-Կենտրոն**» ՍՊԸ կոնսորցիումով հանդես եկող ընկերության կողմից ներկայացված հրավերով պահանջվող որակավորման փաստաթղթերի համապատասխանությունը՝ գնահատող հանձնաժողովն, ուսումնասիրելով «**Փրայմ Թայմ**» և «**Մուլտի-մեդիա-Կենտրոն**» ՍՊԸ-ների ներկայացրած փաստաթղթերը եզրահանգել է, որ այն չի բավարարում մրցույթով ներկայացված տեխնիկական բնութագրի պայմաններին: Մասնավորապես, տվյալ ընկերությունը չունի տեղեկատվական արշավ կազմակերպելու փորձ, երբեք չի իրականացրել նախապես պլանավորված տեղեկատվության տարածման ռազմավարական գործընթաց՝ զանգվածային և անհատական իրազեկման տարբեր միջոցների և գործիքների երկարատև կիրառմամբ: Ընկերությունը չունի մամուլի ասուլիսներ, ճեպազրույցներ, կլոր սեղաններ կազմակերպելու փորձ, միաժամանակ, ընկերությունը չունի

ԶԼՄ-ների՝ ռադիո, տպագիր, էլեկտրոնային մամուլի, նաև սոցիալական ցանցերում իրազեկում կատարելու բավարար աշխատանքային փորձ: Ընկերության ներկայացրած ընդհանուր թվով 12 պայմանագրերից 7-ը «Գրեյթ Վիկտորիա» ՓԲԸ-ի հետ ժամանցային միջոցառման կազմակերպման մասին են, ինչը չի ապահովում նախարարության՝ որպես պետական մարմնի, աշխատանքի բովանդակային բաղադրիչների իրագործումը, իսկ մնացած 5 պայմանագրերից 2-ը, մասնավորապես N ՓՄԶ -ԶԱԿ-ԳՀԾԲ-2018/9-1 և N ՀԶՀ-ԳՀԾԲ 18 /2 ը ոչ ավարտուն են: Վերը նշված հանգամանքները հաշվի առնելով, «Փրայմ Թայմ» ՍՊԸ-ին տրվել է հնարավորություն ներկայացնել գնման հրավերին համապատասխանության վերաբերյալ լրացուցիչ փաստաթղթեր, որից հետո ընկերությունը ներկայացրել է 1 ժամկետանց (N-ՍԵԾԻԳ-5-Ծ) պայմանագիր, 1 գործող և 1 տեսահոլովակների մոնտաժման պայմանագիր:

«Փրայմ Թայմ» ՍՊԸ ներկայացրել է նաև «Մուլտի Մեդիա-Կենտրոն Թիվի» ՓԲԸ-ի հետ համագործակցության պայմանագիր և նույն ՓԲԸ-ի տնօրենի հավաստում, առ այն որ պարտավորվում է իր ողջ մասնագիտական փորձառությամբ՝ տեխնիկական միջոցներով, նկարահանման հրապարակով և անձնակազմով, անհրաժեշտության դեպքում, «Փրայմ Թայմ» ՍՊԸ-ի փոխարեն իրականացնել տեղեկատվական-վերլուծական հեռուստահաղորդաշարի պատրաստում և հեռարձակում՝ համապետական սփռմամբ: Սակայն վերջին հաստատումը, ինչպես նաև լրացուցիչ փաստաթղթերը, ևս չեն պարունակում հրավերի տեխնիկական բնութագրին ամբողջությամբ համապատասխանությունը:

1.2 Հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի 2 ենթակետը՝/2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «Փրայմ Թայմ» և «Մուլտի-մեդիա-Կենտրոն» ՍՊԸ կոնսորցիումով հանդես եկող ընկերության հայտը մերժել:

1.3 Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը որոշեց 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից՝ «Սփրին Գրուպ» ՍՊԸ-ից պահանջել հրավերով սահմանվող որակավորման փաստաթղթերը, ինչպես նաև իրականցնել հարկային հարցում՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետի դրույթները:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

8. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի վերաբերյալ</u>

Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա ք.Երևան,Մ.Մկրտչյան 5, 910 սենյակ հասցեում, սույն արձանագրության 1-ին կետի 1.3 կետով սահմանված փաստաթղթերի ներկայացման ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

նախագահ՝ _____ Մ.Կարապետյան

քարտուղար՝ _____ Մ.Գրիգորյան

անդամներ՝ _____ Մ.Եսայան

_____ Ա.Խեչոյան

_____ Ա.Չիլինգարյան

_____ Ա.Քոչարյան